Վիտամին Դ 01.12.2019

Երեխաները ծնվում են Դ վիտամինի շատ քիչ պահուստով և վիտամինի անհրաժեշտ քանակը ստանում են մայրական կաթի միջոցով: Սակայն, հաճախ մոր օրգանիզմում Դ վիտամինի քանակը բավարար չի լինում երեխային անհրաժեշտ քանակով ապահովելու համար, այդ պատճառով էլ փոքրիկների մոտ հաճախ նկատվում է վիտամին Դ-ի դեֆիցիտ կամ անբավարարություն:

Վիտամին Դ-ն շատ կարևոր է աճող օրգանիզմի համար: Այն նպաստում է Ca-ի և P-ի յուրացմանը, որոնցով շատ հարուստ են կաթնամթերքները: Վիտամին Դ-ն անհրաժեշտ է աճի, ոսկորների ամրության և նյարդային համակարգի առողջության համար: Վիտամին Դ-ի անբավարարության դեպքում երեխաների մոտ կարող են ի հայտ գալ ռախիտի սիմպտոմներ:

Դ վիտամինի դեֆիցիտի առաջնային նշաններն են՝

- ✓ Քնի խանգարում
- ✓ Բարձր քրտնարտադրություն, մասնավորապես քնի և կերակրման ընթացքում
- ✓ Երեխան քնի մեջ հաճախակի գլուխը տրորում է բարձի վրա
- ✓ Մաշկային ցան
- ✓ Գրգռվածություն
- ✓ Երեխան դժվարությամբ է նստում, չոչ անում կամ էլ քայլում

Նշված ախտանիշները երեխայի մոտ նկատելու դեպքում անհրաժեշտ է դիմել մանկաբույժի և անցնել անհրաժեշտ հետազոտությունները:

Հայ ծնողների ակումբ

«Հայ ծնողների ակումբ»
Կայք՝ www.ArmParents.com
Ֆեյսբուք՝ Հայ ծնողների ակումբ
Հեռ.՝ 091 416247

BioMed

«Բիոմեդ» ախտորոշման լաբորատորիա
Կայք՝ www.biomed.am
Ֆեյսբուք՝ Biomed
Հասցե՝ Եղ. Թադևոսյան 5 և Գայի պողոտա 8
Հեռ.՝ 010 483879, 011 483879